

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան դին Կ. Պոլսոյ համար 150 ղշ
» Գաւառաց » 160 »
» Օտար երկիրներու » 180 »
Վեցամսեայ Կ. Պոլսոյ » 75 »
» Գաւառաց » 80 »
Իւրաքանչիւր թերթի դին 60 փր.
Ծանուցման տողը մէկ անգամի հաւ.
մար 2 դուրուշ, երկու անգամի հաւ.
մար 60 փրոյ, աւելի անգամներ
բաւ համար 40 փրոյ :



Լ Ր Ա Պ Ի Ր

ԴԱՂԱՔԱԿԱՆ ԱՋԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿԱՍԱՆԴՆՈՒԹՅՈՒՆ 23 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԴԱՂԱՔԱԿԱՆ

Թնդանութեան որոտումը քանի մը
օրէ ի վեր լուծ կերելի, բայց վո-
խաբէն քաղաքականութեան շշուշ-
ներ կը լուսն, տարտամ բայց երկու-
զարի շշուշներ, որք սովորաբար պա-
տերազմներու դուժկան են :

Արեւմտեան պատերազմին վառ-
դի ծովերն հիւսիսային հոլերով արե-
ւելից հորիզոնին վրայ դիպուելու կա-
կած կուտան :

Յայտնի է որ Գաղղիացոց ան-
ունի քաղաքագետներէն մէկը Պ.
Թիէրի՝ հասարակագետական կառա-
վարութեան կողմէ արտաքին կարգի
դեպքանութեան պաշտօնով լինորա,
վիճանա եւ քաղաքական դրկում է :

Պաշտօնին բուն նպատակը որոշ
կերպով յայտնուած չէ, բայց ինչպէս
որ շատ անգամ կը պատահի, երբեմն
պարտաւորութեան երբեմն հաւանա-
նութեան, երբեմն բերնէ թնամ բառ
մը, երբեմն ալ անխորհրդաւորութեան
կառավարութեանց դադանիքը մա-
տմա մ'երեւան կը հանեն, երբեմն ալ
կառավարութեան մը շահը կը պահան-
ջէ փորձագունտ (պալմա) տ'ան) մ'ար-
ձակել, հասարակաց կարծիքէն դու-
նելիքը ընդունելութիւնը հասկնալու
համար :

Թիէրիս ասանց մէկն ալ չէ. թերեւս
երեւան ելած զորոյցները բոլորովին
անհիմն են. բայց վերջապէս լրագրաց
բերանն ինչպէս է, եւ պարտաւորութեան
հաւանականութիւն կուտան :

Պ. Թիէրի լինորա գացեր է, կը-
ւեն, նախ Անգղիոյ բարոյական եւ ե-
թէ պէտք ըլլայ՝ նիւթական միջնոր-
դութիւնը խնդրելու համար եւ կերելի
թէ չէ յաջողելու Անգղիոյ կառավարու-
թիւնը պաշտօնական կարեկցութիւն
միայն յայտնելու է Պ. Թիէրի խմայու-
ցեր է թէ Անգղիա թէ եւ սրտանց
համակիր է Գաղղիոյ, իր շահը կատար-
եալ չէր ընդունել կը հրամայէ իրեն :

Այս պատասխանին վրայ Պ. Թիէրի
հետեւեալ յայտարարութիւնն ըրեր է
Անգղիոյ արտաքին գործոց պաշտօնէ-
ին :

« Գաղղիա պարտք համարեցաւ
« Իրեն՝ բարեկամական առաջարկու-
« թիւն մ'ընել Անգղիոյ, իր բարեկա-
« մին ու գաշնակիցը ճանչելով զայն :
« Երբոր մեր առաջարկութիւնը չէր
« ընդունիր, մեզ կը հարկադրէր որ
« ուրիշի դիմենք : Հիմա մեք ձեռք
« պիտի առնունք այն բանակցութիւն-
« ները, զորս Նաթիոնալ Ա. Էրֆուրի
« մէջ սկսած էր Ռուսաց Ազգայնադ-
« թիւնը հետ Պիտի քանք բեգ-
« ընտրուի կառավարութեան որ ե-
« թէ զենքով մեզ հետ դաշնակցի :
« Արեւելից վրայ ունեցած դիտաւո-
« թութիւններուն դործադրութեանն
« արդեւ չենք ըլլար այսուհետեւ :

« Արդարեւ դառն է մեզ ի սպառ.
« հրաժարիլ այն քաղաքականութենէն
« զոր դարձեր ի վեր խզի մտք
« շարունակեցինք Անգղիոյ հետ հա-
« մատուցեալ մեր բայց այսպիսի ծա-
« ներ պարտադաներու մէջ մեզ օգնել
« չուզեցինք. պարտք կը դնէ մեր վրայ
« որ ուրիշ գաշնակցութիւններ փն-
« տըռենք : »

Այսպէս ըսեր է, կըւեն, Պ. Թիէրի
Անգղիոյ կառավարութեան եւ լինո-
րայէն Բեդֆորտի գացեր է, ինչ
տպաւորութիւնն ըրեր է այս խօսքը
Անգղիոյ կառավարութեան վրայ յայտ-
նի չէ, բայց այս ստորգ է որ Պ. Թիէ-
րի մեկնելէն ետեւ ֆոնտներն զգալի
կերպով ինչպէս լինորայի մէջ, եւ յայտ-
նի է որ ֆոնտներուն եւեւէլը, ինչ-
պէս լա Թիէրի լրագրի իրաւամբ կը-
սէ, քաղաքականութեան ճշմարիտ
ճիւղանշանն է :

Պ. Թիէրի այս յայտարարութեան
ստորգ ըլլալուն գլխաւոր հաւանակա-
նութիւնը սա խորհրդածութեան վը-
րայ է, որ Գաղղիա չկրնար Ռուսիայէն
օգնութիւն յոստալ՝ առանց վտա-
րար զոհողութիւն մ'ընելու. եւ եր-
բոր նոյն ինչ իր դոյնութիւնը վտանգի
մէջ է, երբոր երկրորդական տէրու-
թեանց կարգէն ինչպէս սպառնալից
ներքեւ է, եւ Ռուսիոյ հետ դաշնակ-
ցելով կրնայ վերադառնալ իր արեւելեան
քաղաքականութիւնը դիւրաւ կը ըր-
նէ :

Գաղղիա մէկը թողլով այն հի-
նաւանք քաղաքականութիւնը, որմէ
1853 ին Գրամի պատերազմը ծագե-
ցաւ, կրնայ Ռուսիոյ հետ համաձայնիլ
եւ Արեւելից վրայ անոր ունեցած դի-
տաւորութիւնը նպաստաւորել :

Ահա այսպէս Նաթիոնալ Գի ան-
խորհուրդ եւ աննախատես փառա-
նութիւնն, իր թաղը գլխէն թռցնելէ,
Գաղղիոյ մէկ մեծ մասն արեւմուտ
եւ աւերածով ծածկելէ ետեւ, մեր խա-
ղաքութիւնն ալ վտանգի մէջ կը ձգէ :

Բեդֆորտի մէկն եւ կառ հեռագիր-
ներ կը ծանուցանեն թէ Պ. Թիէրի եր-
կու անգամ առանձին տեսակցութիւն
ունեցեր է կորաւքոֆ իշխանին հետ,
եւ յետոյ կայսեր ներկայացրեր է :

Բուսիական Մոնիթէօրն երկու
շրջաբերական կը հրատարակէ չէրք
տէրութեանց քով զանազան Գերմա-
նական դեպքաններուն ուղղեալ :

Առաջինն մէջ՝ որ Ռէյնի գըր-
ուած է սեպտեմբեր 13 թուով Պ. Պի-
մարք՝ իր յետ թաղաւորին ըրած յայ-
տարարութեանց հակառակ պատերազ-
մին ըրեր պատասխանատուութիւնը
Գաղղիացոց աղբիւր վրայ ձգելով կը
յայտնէ թէ, Ժամանակ Ժամանակ այս
աղբին Ներսիսի ըրած յարձակում
նշին այսուհետեւ անհնար ընելու հա-
մար նիւթական տպահրութիւններ
պիտի առնու անկէջ :

Երկրորդը՝ Պ. Թիէրի Յայտնի շրջա-
բերականին պատասխան գրուած է,
որուն մէջ Պ. Պիմարք՝ դարձեալ նոյն
դիտաւորութիւնները կրկնելով՝ յայտ-
նապէս կը ծանուցանէ թէ Սթրաս-
պուրին եւ Մէյն անաղծառու պիտի
առնու Գաղղիոյ ձեռքէն :

Ահաւասիկ այս երկրորդ շրջաբե-
րականին թարգմանութիւնը :

Մօ 16 սեպտ. 1870

Պարոն.

« Արդէն տեսած էք այն շրջաբերա-
կանը՝ զոր Պ. Թիէրի Յայտնի, ֆարիզի մէջ
իւխանութիւնը ձեռք անցունողներուն
անուամբ, որք իրենք զիրենք աղբային
պաշտպանութեան կառավարութիւն կը
կուչեն, օտար աշխարհանց քով գտնուող
Գաղղիական դեպքաններուն ուղղած է :

« Միւսկամայն իմացայ որ Պ. Թի-
էր ծածուկ պաշտօնով քանի մ'օտար ար-
քունեաց քով գրկուած է, եւ կրնամ մա-
կարելի որ մէկ կողմանէ պիտի ջանայ
հաւաքանել թէ ֆարիզի այժմեան կառա-
վարութիւնը խաղաղասիրութեամբ վառ-
եալ է, միւս կողմանէ ալ չէրք տէրու-
թեանց միջնորդութիւնը պիտի խնդրէ ի
նպատակ այնպիսի հաշտութեան մը, որ
Գերմանիոյ տարած յաղթութեանց պը-
տուղիներ ձեռքէն առնու, եւ թոյլ չտայ
որ Գաղղիոյ դարձեալ մօտ ժամանակէն
Գերմանիոյ դէմ ընելիք յարձակումներն
արգիւղ հիմանց վրայ ընէ հաշտութիւնը :

« Փարիզի այժմեան կառավարութեան
սրտի մտքը խաղաղութեան փափաքելուն
մեք չենք կրնար հաւատալ, քանի որ
երկրին մէջ իր խօսքերովն ու կործերովը
շարունակ ժողովրդական կիրք կը բոր-
բոքէ, պատերազմին վիշտերովն արդէն
կազմած ժողովրդեան մը ցասումն ու ա-
տելութիւնը կը թունաւորէ, եւ Գերմա-
նիոյ ընդունիլ կրցած հաշտութեան բո-
ւր հիմքը կանխու կը դատապարտէ
իրեւ անընդունելի Գաղղիոյ համար :
Այսպէս այդ կառավարութիւն ինքնին
անհնար կընէ խաղաղութիւնը, որուն
պէտք էր ժողովուրդը պատրաստէր հան-
դարտ լեզուով եւ իրաց վիճակին ծանրու-
թիւնն ի հաշիւ առնելով, եթէ կարենայիք
հաւատալ թէ անկեղծաբար մեզ հետ
հաշտութեան վրայ բանակցելու դիտաւո-
րութիւն ունի : Մեր հաշտութեան պո-
մաններուն վրայ պահանջութիւն չունե-
նալով զինադադար կնքելու խնդիրն այն
ժամանակ միայն կրնայ լրջաբար ուղղը-
ուիլ մեզ՝ երբոր կարծուի թէ մեր քով
զինուորական եւ քաղաքական դատում
չկայ, կամ Գերմանիոյ շահերուն անփոյթ
ենք :

« Առկէց զատ ուրիշ էական արդեւ
մը կայ, որով Գաղղիացիք Գերմանիոյ
հետ հաշտութիւն ընելու հարկը լրջաբար
չեն նշմարել. այն է հիմնական կառա-
վարութեան ձեռք տաճած յոյսերին
թէ չէրք տէրութիւնները դեպքանական
կամ զինուորական միջնորդութիւն մը կը-
նեն ի նպատակ Գաղղիոյ, եթէ Գաղղիոյ
ժողովուրդը կարենայ համոզուիլ թէ, բո-
որում ինքը միայնակ եւ կամահաճ կեր-
պիւ պատերազմը զրգոցեց, եւ ըստ որում
Գերմանիա ալ միայնակ մարտնչեցաւ իր
դէմ, ուստի եւ միայնակ պէտք է իր հա-
շիւը կարողարէ Գերմանիոյ հետ, այն ժա-

մանակ չուտով վերջ կուտայ իր դիմադ-
րութեան, որ տառադիւ անօգուտ է այսօր
Չէրք տէրութիւններն անգթութիւնը ք-
րած կըլլան Գաղղիացոց աղբիւր, եթէ
թոյլ տան որ ֆարիզի կառավարութիւնը
միջնորդութեան անգործադրելի յոյսերով
ժողովուրդն զբաղեցնէ եւ այսպէս կուչն
երկնցնէ :

« Մեք հետի ենք որ եւ է կերպիւ
Գաղղիոյ ներքին դործերուն խառնուիլ
ուղիւն, ինչ կառավարութիւն որ Գաղղի-
ացոց աղբիւր ուղէ իրեն համար հաստա-
տել, մեզ փոյթ չէ : Միւսկեւ հիմա կ'ան-
նաւորապէս Նաթիոնալ կացոյցի կառավա-
րութիւնը միայն ճանչուած է մեզին :
Մեզ հետ բանակցող օրինաւոր կառավա-
րութիւնն իրօք ով որ ալ ըլլայ, մեր հաշ-
տութեան պայմաններուն համար հարկ
չկայ գիտնալու թէ Գաղղիա ինչպէս եւ
որմէ կը կառավարուի Մեր հաշտու-
թեան պայմաններն իրաց ընտելենէն եւ
հզօր ու խաղաղութեան թշնամի ժո-
ղովրդեան մը դէմ հարկ եղած պաշտ-
պանութեան օրէնքէն կը պատուիրուի մեզ
Գերմանական կառավարութեանց միաբան
կարծիքը կը խնդրէ որ Գերմանիա մին-
չեւ ցարդ ունեցածէն լաւագոյն օտանա-
նաղբիւններով պաշտպանուի Գաղղիոյ
ամեն կառավարութեանց դարձեր ի վեր
ըրած սպառնալիքներուն եւ յարձակմանց
դէմ : Քանի որ Գաղղիա Միջնորդութիւն
ու Մէյն իր ձեռքն ունենայ իր ուղիւն-
գէտ յարձակողական միջոց հզօրագոյն է
մեր պաշտպանողականէն՝ յոյսը շարաւա-
քին Գերմանիոյ եւ Ռէյնի հիւսիսակողմը
գտնուած Հիւսիսային Գերմանիոյ մասին
նկատմամբ : Սթրասպուրի Գաղղիոյ ձեռ-
քն ըլլալով, դուրս յարձակուլու քաց
դուռ մ'է միշտ շարաւային Գերմանիոյ
վրայ : Իսկ Գերմանիոյ ձեռքը Միջնա-
պուրի եւ Մէյն պաշտպանողական դիրք
մը կ'ստանան : Քանիէն աւելի պատերազմ-
ներու մէջ մեք երբեք յարձակում ըրած
չենք Գաղղիոյ դէմ, եւ ուրիշ բան մը
չենք ուղեր անիլ, բայց միայն մեր ապա-
հովութիւնը մեր երկրին մէջ, Գաղղիա՝
ընդհակառակն՝ այսօր ըլլալիք որ եւ է
հաշտութիւն իրեւ զինադադար պիտի
նկատէ, եւ իր ներկայ պարտութեան
վրէժն առնուլու նախանձով նորէն մեր
վրայ պիտի յարձակի՝ վիճ հանելով մեզ
հետ եւ ամեն օրէնք արհամարհելով, ինչ-
պէս այս տարի ըրաւ, երբոր ինքզինք
բաւական հզօր անիլ ինքնին կամ օտար
դաշնակցութիւններով :

« Յարձակողական անկի դժուարա-
ցնելով Գաղղիոյ համար, որոյ նախորդ-
չումէն միայն յառաջ եկան միւսկեւ ցարդ
Եւրոպիոյ ամեն վրդուլեմները, միանգա-
մայն Եւրոպիոյ շահուն համար ալ խառնած
կըլլանք. որ է խաղաղութեան շահը :
Գերմանիոյ կողմէն կողմէն խաղաղու-
թեան վրդուլեմն երկվոր բնաւ չկայ :
Մեր կամաց հակառակ այս պատերազմն
ընելու բռնադատուելով, որմէ չորս տարի
ջանքիքը խուսափել, լռեցնելով մեր աղ-
գային ինքնասիրութիւնը՝ որ շարունակ
կը գրգռուէր Գաղղիայէն, կուրենք հիմա
մեր ապագայ արդիւնութիւնը պահանջել
իրեւ դին այն մեծ ճգնաժամը՝ զորս մեր
պաշտպանութեան համար ընելու պար-
տաւորեցանք : Մէկը չկրնար մեզ իրեւ
խառնապահել ամբաստանել, եթէ այս

արդար եւ իրաւացի պահանջումն ամուր
բանէնք :

Հաճեցէք եւայլն

ՊԻՄՐԻՔ

Կըսուի թէ Ամերիկայի Միացեալ-
Նահանգաց եւ Բուսիոյ կառավարու-
թիւններն համաձայնութեամբ իմա-
ցուցեր են Բուսիոյ կառավարութեան
թէ դժգոհութեամբ կը տեսնեն Գեր-
մանիոյ տէրութեանց հողային պահան-
ջումները, Բուսիոյ կայսրը՝ որ Գերմա-
նիոյ համակրութեամբ տեսած էր Գեր-
մանական զինուոյ յաջողութիւնը, յոյս
յայտներ է թէ Կիւսիոյ թագաւորը
նկատողութեան կառնու իրեն եղած
այս աղբարարութիւնը, որ Գաղղիոյ
վրայ կարեկցութիւն ունենալու դի-
տաւորութենէ աւելի՝ Գերմանիոյ նը-
կատմամբ ունեցած բարեկամական ըզ-
դացումէ յառաջ կուգայ :

Արդիական Միջին-Բազմաթիւ
ընկ խօսքին նշանակում, Բուսիոյ չորս
պայման կառավարիչ հաշտութեան :

1. Հինգ հազար միլիոն ֆրանք հա-
տուցում :
2. Գաղղիական նաւատորմին կէ-
սին իրեն տալ :
3. Բուսիոյ զօրքերը փարիզ
մտցնել :
4. Հաշտութեան գաշնադիրը ֆա-
րիզի մէջ ստորագրել :

Այս պայմաններուն մէջ Ալգասի
եւ Լորէնի խօսք չկայ :

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Թուր 2 հոկտ.

Փարիզէն սեպտ. 30 թուով հե-
տեւեալ լուրերը կ'առանանք :

Թշնամին յարձակում ընելու մը-
տաքիւր չեղեւիր իր պաշարման շրջ-
անակը գաղղիական թնդանօթներուն
հասողութենէն դուրս է, եւ խիստ
հեռուէն բարձունքները գրաւած է :
Ամեն անգամ որ մեր բերդերը պաշա-
րի կարաւան մը կամ հետադուր-
թիւն մը կընդմաքեն, պայթուցիկ ուռմ-
բեր կարձակեն, որոյ հարուածները
բնաւ պարապ չեն ելներ :

Բուսիոյցիք վէրայի քով ամուր
բանակաւորի մը կը շինեն, որմէ կի-
րելի թէ ձմեռն հոն անցունելու կը
պատրաստուին :

Սեպտ. 23 ի կուրին վրայ հրատա-
րակուած պաշտօնական տեղեկագիրը
կըսէ թէ Բուսիոյցիք 8000 հոգի էին,
եւ մեծ կորուստ ըրին իսկ մեր կու-
րուսն է 3 պաշտօնական վիրաւոր-
ւած, տասն եւ մէկ զինուոր մեռած
եւ 80 վիրաւորուած :

Ֆիորենցա 3 հոկտ.

Հաքմի ժողովուրդն իտալիոյ հետ
միանալու մասին իր կամքն ընդհանուր
քուէարկութեամբ յայտնելու կոչուե-
լով միայն Հաքմի Դմէշ 40785 այո՛, եւ
46 ոչ քուէ տրուեցաւ :

Միւս քաղաքներն ալ դրեթէ մի-
աձայն այո՛ քուէ տուին : Ամեն տեղ
աննկարագրելի յիմովիւն կայ :

Պէրլին 3 հոկտ.

Հետեւեալ պաշտօնական հեռա-
գիրն եկաւ երէկ վէրայէն :

Սեպտ. 30 ի կուրին մէջ Գաղղիաց-
ւոց կորուստն էր 1200 մեռելու ու վի-
րաւոր, որոց մէջ նաեւ Կիւսիոյ զօրա-
պետը, եւ 300 զերի : Մեր կորուստն
էր 80 մեռելու, որոց 8 պաշտօնակալ,
եւ 120 վիրաւոր :

Երէկ եւ այսօր նոր բան մը չկայ,
միայն քանի մը թնդանօթի հարուած
բերդերէն արձակուած :

Պէրլին 4 հոկտ.

Հետեւեալ պաշտօնական հեռա-
գիրն առնուեցաւ երէկ Ֆէրիէրէն :

Փարիզի առկա նոր բան մը չկայ,
Մէյի քով Քիւսիոյ զօրապետին բա-
ժինը յառաջապահներու սաստիկ կը-

ուր մ'ունեցաւ : Թշնամին եւ քուե-
ցաւ մեծ կորուստով :

Վիեննա 3 հոկտ.

Վիեննայի Կաղէթի հիմնովին սուս
կը հանէ Բուսիոյ զինուորական պատ-
րաստութեանց վրայ տարածուած զը-
րոյցները :

Վիեննա 4 հոկտ.

Պ. Թիէր քիչ ժամանակէն հոս
կըսպատուի Բերդապոլիէն :

Ֆիորենցա 4 հոկտ.

Բնդհանուր քուէարկութիւնը,
վիթէրպոլիզմաւ, 24.207 այո՛, 228 ոչ,
Ֆիորենցան " 25.536 այո՛, 271 ոչ,
կը հաւաստեն թէ Պ. Թիէր հոս պի-
տի գայ եւ Պ. Մէնարի հետ խորհրդակցի
իրենց պաշտօնին արդեանց վրայ :

Լոնտոն 3 հոկտեմբեր

Սեպտ. Գոնս. Դոյց	92 /
Օսմ. Գոնս. բաց.	44 / - 42
" " Դոյց.	42 - /
" " Նոր փոխ.	49 / - 30
Պանքա " 41 / - 3 /	
Ռանթ Գաղղ.	53
Ռանթ խաղ.	53 / - 4 /
Վիեննա 4 հոկտ.	
Ս. Ժիւ Գիեննայի	422,30
Լիվերքուլ 4 հոկտեմբեր	
Բաւպակ, Մ. Կ. 0.	8 /
Շախուած	8000 հակ.
Գիններ կ'ընան	

ԳՈՍՏԱՆԿԱՅԻՆ ՊՈԼԻՍ

ԷՆԱՍՏԵ ՈՒՍՏՈՒՄԷ

22 սեպտ. երեքշաբթի իրիկուն 47 08

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Օսմանեան երկաթուղեւոյ բաժին-
ներուն չորրորդ վիճակահանութիւնը
շարժիթ օրը կատարուեցաւ :

Ելած առաջին չորս թիւերն են.	Ֆրանք
243734	որ շահեցաւ 300000
934816	" 25000
89308	" 20000
323864	" 20000

Կըսուի թէ առաջին եւ չորրորդ
թիւերը շահողները Պոլսեցի են :

Կեդրոնային հեռագրով լուր կու-
տան թէ քաղաքին Շուկային մէջ ա-
հադին հրդեհ մը բռնկելով 1500 ի
չափ խանութ ալրեր է, եղած կորուստ
50—60 հազար լիւրա կը հաշուեն :

Կիրակի օրը Հատունեան էֆէնալին
Ղալաթիոյ Պապական ֆրիչի եկեղեց-
ւոյն մէջ կախակայանք կարգաց չորս
հակահատունեան եպիսկոպոսներու
գէմ, որք են, Գեր. Գաղանճեան Սու-
քիա եպիսկոպոս, Գապարեան Բար-
սեղ եպիսկոպոս, Պաթիլարեան Յակոբ
եպիսկոպոս եւ Իգնատիոս եպիսկոպոս :

Երկուշաբթի օրը Հակահատունեան
կաթնիկ աղջակներ վերադին շո-
գեաններով Պէտլէք գաղին եւ Մեծ.
Եպարքոսին աղերսադիր տուին :

Լաւանուս նայելով, Բարձ. Առլի
փաշան պատասխանեց թէ իրենց
ինդրոյն պատասխանը քանի մ'օրէն
պիտի տրուի :

ԱԶԳԱՅԻՆ

Մնայեալ ուրբաթ առուր երեւի-
խանական ժողովին մէջ խօսուած կամ
կարգացուած ատենաբանութիւննե-
րէն՝ Մեծ. Տոքթոր Ն. Բուսիւնեան է-
ֆէնտիկը Օրդընին մէջ հրատարակ-
ուած ըլլալով մեք ալ արժան կը հա-
մարինք Մեծ. Եւսուֆեան Տիգրան
էֆէնտիկը հրատարակել որպէս զի
հասարակաց կարծիքը երկու վիճաբա-
նող կողմանց յառաջ բերած փոփոխ-
աններով ըստ այնմ՝ դատուութիւն

ընէ յառաջիկայ ուրբաթ օրն ըլլալիք
որոշման վրայ :

Տեարք իմ.

Գաղափարաց բաղխումէն ճշմար-
տութիւնը երեւան կ'ըլլէ :

Ժողովի մը մէջ արտայայտուած
ղանաղան կարծիքներն ո՛րչափ իրարու
ներհակալ ալ ըլլան, պէտք է զանոնք
ամենայն հանդարտութեամբ մտիկ ը-
նել, եւ մեր վրայ ըրած յանկարծա-
կան աղբեցութիւնը հաստատուն բա-
րոյական ուժով մը դիմակայել :

Վիճաբանութեան առարկայ ե-
ղած խնդրոյն ո՛ր կողմը որ գտնուինք,
պէտք է քննադատած կամ պաշտպա-
նած խնդիրներուն խորը թափանցել
եւ հանդարտ ոգով քննել երկու կող-
ման փաստերն :

Բայց ինչպէս որ մեր տղնիւ պաշ-
տօնակիցներէն ոմանք իրենց կարծիքն
յառաջ վարելու համար պատշաճ դա-
տեցին օրինակներով հաստատել իրենց
փաստերն, եւ ոմանք ալ պահ մը բռն
խիլ խնդրէն խտորիլ, հրաման կը
խնդրեմ եւ ալ թէ խնդրէն իրտու-
րելու, այլ յառաջ քան զվստի խնդիրն
փոքրիկ յառաջարկն մը ընելու, ո-
րու կը կարծախմ կարծիքս լաւ բա-
ցատրելու համար :

« Երբ կը տեսնուի աղդի մը կե-
նաց ընթացքին մէջ ժողովուրդին հըմ-
տագ ոչն դասին մէջ մասը՝ որ հաստա-
տանութեամբ հետամուտ կըլլայ ա-
ռաջագրեալ նպատակի մը համար,
ներքին է երեւակայել թէ այն նպա-
տակն ըստ ինքեան փափաքելի է, եւ
օգտակար պիտի ըլլայ ոչ միայն ժո-
ղովրդեան այն մասին՝ որ զայն կը
խնդրէ, այլ ամբողջ ազգին :

« Ինչպէս եւ կարելի է որ մասնաւոր
դասու մը շահը, կամ պարզապէս անձ-
նաւորական նկատմունք, այն նպատա-
կին շարժառիթն եղած ըլլան, որով
վիճաբանութեան սաստկացած միջո-
ցին խնդրոյն յարակից խիստ կարե-
ւոր խորհրդածութիւններ սահին կամ
աննշան երեւան, որք թէ հանդարտ
մտք դատուելու ըլլային, անտարա-
կոյս վիճաբանողներուն ուշադրութիւն-
ներ պիտի գրաւէին : Բայց թէ միանգամ
նպատակը ձեռք բերուի, ալ ան ա-
տեն ոչինչ կընայ գիմակայել անկողմ-
նակալ քննադատութեանց : Այլ միայն
կոչնակի կիրքերն կը պաղին, յուզ-
եալ միաբն իր հանդարտին, այլ անոր
հաստատութեան պարզ տեսական նը-
կատմանց հետ՝ գործնական նկատ-
մունքներն ալ միանալով, անոր օգ-
տին եւ անտեղութեանց վրայ հաս-
տատուն կարծիքներն երեւան կ'ըլլեն :

Այսպէս եղաւ նաեւ մեր Ազգ.
Մահմանդութեան հաստատութեան
ատենը : Մնչուտ կը յիշէք Տեարք
իմ, թէ քանի որ իբրեւ առաջարկու-
թիւն ներկայացած էր, միշտ քննա-
դատուեցաւ եւ պաշտպանուեցաւ,
չատ անգամ սխալ եւ միայն կէս ճշ-
մարիտ փաստերով, բայց երբ որ սա-
կաւթիւ մասի մը առաջարկած ըս-
կըզբունքն Ազգին օրէնքը եղաւ, ան
ատեն քննադատութիւնը պարզուե-
ցան, եւ սկսանք ամենքս յատակ կեր-
պիւ տրամաբանել :

Տեարք իմ, տեսանք աշխարհական
եւ եկեղեցական ոչ միայն բարձրաս-
տիճան, այլ միջին անգամ խիստ խո-
հական եւ հանճարեղ մարդիկ, որք
Մահմանդութիւնը անկրօնութիւն,
անհաւատութիւն, եւ այլն եւ այլն հը-
րատարակեցին, բայց հիմա կայ արդ-
եօք մէկ խոհական հայ մը որ կասկա-
ծի թէ, Ազգին Պատրիարքն եւ վար-
չութիւնը պէտք է որ ընդհանուր աղ-
դէն ընտրուած ըլլան, եւ ոչ թէ մի
միայն այս կամ այն դասին, ամիրայէն,
իշխանէն, սեղանաւորէն, վաճառակա-
նէն կամ արհեստաւորէն, եւ կամ այս
կամ այն քաղաքէն կամ գաւառէն :

Գննադատութեան ներքեւ ինկած մի-
ակ կէտն այն է թէ, ո՛րն է ընտրեալ-
դոյն եղանակն, որով Ազգ. երեսփո-
խանական ժողովը կարենայ կատար-
եալ կերպիւ աղղին ընդհանրութիւնը
ներկայացնել. կամ լաւ եւս, ո՛րն է
Մահմանդութեան ոգին 'ի դործ
դնելու դիւրագոյն եղանակն :

Արդ. Սոյ խնդրոյն նկատմամբ՝
հիշդ մի եւ նոյն դուրսեան մէջ կը
գտնուի այսօր ապքը. ուրեմն պէտք
է զարմանալ որ Կիւսիոյ Կաթողիկոսին
ընտրութիւնն Ազգ. Բնդհանուր Ժողո-
վոյ կառավարութեան ենթարկուելուն
առաջարկութիւնը մեր ազնիւ պաշտօ-
նակիցներէն ոմանց դիւրագրելու
խղճմամբ քին դալելով, Արարատեան
Մայր Աթոռէն բաժնուելու փառնդ մը
նշմարեցին անոր գործադրութեանը
մէջ :

Այսպիսի պարագայից մէջ սովո-
րաբար կէտ մը կայ, ուր լրջամիտ
խորհուրդներն ենթադրութեանց տե-
ղի կուտան. եւ երբ երեւակայութիւն-
ըն միանգամ կը յուզի, անոր ցնորք-
ներն անսահման են. անոնք որ հն-
թագրութեանց չափանակին մէջ կը հո-
րովն իրենց խորհրդածութիւններն,
գիւրաւ իրականութեան կը վերածնեն
զիրենք տանջող ամենախորքը. եւ ան-
տեղի գաղափարներն, Նման այն ճա-
նապարհորդաց, որք բարձրաբերձ լե-
րանց գաղափարն ելլելով խիստ հեռու-
ներն դիտած ատեններն՝ բաւական սը-
րատեսութիւն չեն ունենար իրենց
աչքին առջեւ եղած հորիզոնին մեր-
ձակէտը նշմարելու :

Երբ յարգեմ մեծ արդ ընդդիմաբա-
նից կարծիքներն, եւ կը խոստովանիմ
որ ջանացին ապացուցանել իրենց հե-
ռատեսութիւնը. կը հաստատեմ որ
ճարտարութեամբ պաշտպանեցին ի-
րենց կարծիքը, եւ խիստ լաւ փա-
տաբանեցին Մայր աթոռին կրօնաց
կարծեցեալ բռնաբարութեան, ինչպէս
նաեւ Սոյ թեմական իրաւանց երե-
ւակայական բռնաբարութեան վրայ
Բայցներն ինձ իմ արդիւ պաշտօնակից-
ներս՝ ըսել իրենց թէ վերջիվերջ
ճա-
նապարհորդաց նման այնչափ հեռա-
տեսութիւն ըրին, խնդրոյն քաղաքա-
գիտական մասին օչնչափ խորը թա-
փանցեցին, որով ամենէն կարեւոր եւ
հական կէտը իրենց ուշադրութիւնէն
վերաբացաւ, այն է Մահմանդութեան
ոգին, որ միամտաբար զահեցին պարզ
կարծիք մը պաշտպանելու համար.
կարծիք մը՝ որու ճշմարտութեան մե-
ծագոյն եւ զօրաւոր փառքը պարզա-
պէս ենթադրութիւնն է, Հարկ չէ ը-
սել թէ ինչ աստիճան հաւատարմ կրնայ
ըլլալ ինքն աղբութեանց վրայ հիմնուած
յճիւ մը :

Բայց, տեարք իմ, այս առաջին ան-
գամը չէ որ խիստ խոհական մարդիկ
թիւր եղբակցութիւն մը պաշտպա-
նելու կը հարկադրուին, եւ սխալը
ճշմարտի տեղ ըմբռնելով կը ջանան
ուրիշներն ալ համոզել ճիշտեալպէս
քանի յառաջանան իրենց կարծեաց
պաշտպանութեանը մէջ, փաստերին
աւելի հակառակ կողման կը ծառայէ-
քան թէ իրենց, որով նախ յոռի շըր-
ջանի մը մէջ կը հողովն իրենց եղբա-
կացութիւնը, եւ անկէ ալ ազատելու
համար կատարեալ սովորութիւն մը
կը պաշտպանեն առանց նշմարելու :

Այս խօսքերս մեկնութեան կը
կարօտին՝ ենթադրութեանց տեղի չը-
սալու համար. ուստի կը փութամ
յայտնել թէ իմ պաշտօնակիցներէն եւ
ոչ մէկը կատարաստանեմ իբրեւ ուրի-
շին կարծեաց թարգման, կամ օտար
քաղաքականութեան գործիք. քա-
ղիցի հեռի յինէն այդպիսի գաղա-
փար մը, վառն զի վատաի պակասու-
թեան նշան է Ազգային գործոց մէջ,
փոխանակ իւր ընդդիմախօսին անձ :

